

ԱՆՄԱՆՈՒ ԷՋԵՐ ԽՈՐԵՆ ՆԱՐՊԵՅԻ ԿՅԱՆՔԵՆ

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ (Բուխարեստ)

Շատ է գրված խորեն նարպեյի մասին, որպեսզի անհրաժեշտ ըլլար անգամ մը ևս ներկայացնել զայն իր բովանդակ կյանքին ու գործունեությանը մեջ։ Ան ինքզինք հանձնած է արդեն պատմության, և քիչ չեն աղբյուրները, որոնք իբրև կուլան պիտի ծառայեն մեր պատմության մեջ անոր վերջնական տեղը փնտռողին, աշխատանք, որ այնքան ալ դյուրին պիտի չըլլա, սակայն, այն կերպարանքին պատճառով, որով զայն մեզ պիտի ցույց տան այդ աղբյուրները, մանավանդ անոնք, որոնք առավելապես իր բիծերուն մասին կխոսին։

Մեզի շիյնար իր վաղվան կենսագիրը շվարումե փրկելու ապերախտ դերը՝ մատնանշելով այստեղ դրական գիծերը ևս փոթորկոտ կյանքին, որ եղավ իրը, հազիվ վաթսուն տարիներ ապրած այս մարդուն՝ որ անհունապես զբաղեցուց իր ժամանակակիցները, և նաև անոնք, որ զայն դատեցին հետագային։

Շատ ավելի համեստ է մեր ստանձնած պարտականությունը։ Կարճ պահ մը միայն պատմել իր կյանքին, այսինքն զույգ այն տարիները, զորս ան անցուց ռումեն հողի վրա։ Ցարդ անծանոթ մնացած նյութեր, որ այս պահուս մեր ձեռքին տակ են, մեզ հնարավորություն կուտան լուսաբանելու այդ պահը, որ թեև շատ կարճ է տևած և սահմանափակված է դադուրի մը նեղ շրջանակին մեջ, շահեկան էջեր պիտի հայթայթե, սակայն, մեր նորագույն պատմությամբ զբաղվողներուն։

Այն հմայքը, որով զարդարված Ռումանիա ոտք կկոխեր նարպեյ և որուն շնորհիվ արժանացավ առաջին իսկ վայրկյանին բացառիկ ընդունելության մը, կհիմնվեր առաջին հերթին տիտղոսներուն վրա, որոնցմով պճնված էր նարպեյ։ Ան Ռումանիա կուգար իբրև «Իշխան Լուսինյան»։

Գաղտնիք մը չէ, որ ժթ դարը բավական հայ իշխաններ ստեղծեց։

Ասոնցմե ոմանք պարզ խաչագողներ էին, որոնք արկածախնդրության կերթային նվրոպայի մեջ։ Ոստանիկ Տեր-Մարգարյան ասոնցմե մեկն էր։ Ուրիշներ, ինչպես Հարություն Չաքրյան, իրենց այս կամ այն հանգանությունը թուրք ռեժիմին դեմ՝ ռեքլամներով կպարարտացնեին հայ գաղութներուն մեջ՝ իշխանական ծագում ալ խառնելով այդ ռեքլամներուն։ Կային ալ, որ իրենց արկածախնդրությունը կմտցնեին քաղաքական ոլորտներու մեջ՝ իրենց «իշխանական» տիտղոսները իբրև թե ի սպաս դնելով հայ ժողովուրդի ազատագրության դատին, ինչպիսին էր համբավավոր «Լուսինյան իշխանը», որ հավակնեցավ Կիլիկիան ազատագրել անցյալ դարու կեսերուն, մինչև իսկ հետաքրքրությունը գրգռելով նապոլեոն ՚ի կայսեր։

Փառասիրությունը վարակեց նաև Գալֆայան երկու վարդապետ եղբայրները՝ Ամբրոսիոսն ու Խորենը, և պիտի գրգեր դանոնք ևս իրենք՝ զիրենք իշխան մկրտել։ Ամբրոսիոս, որ հետագային սքեմն ալ թողուց և գտավ իշխանուհի դառնալու ծարավով բռնկած ֆրանսուհի մը իբրև կողակից՝ քառասուն տարի առնքաց Փարիզի իր ապարանքին մեջ իբրև «Իշխան Գվիտոն Լուսինյան»։ Խորեն

սքեմը պահեց, Գալֆայանը փոխակերպեց Նարայեյի, և առիթն առիթ մեջտեղ կհաներ իր «Լուսինյան իշխան»-ությունը:

Գվիտոն Լուսինյան պիտի չբավականանար միայն Լուսինյան տոհմեն հռչակելով ինքզինք, այլ պիտի «վերահաստատեր» 1891-ին «Սինա լերան Սրբուհի Կատարինեի ասպետական կարգը», որ 1063-ին հիմնված էր Պաղեստինի մեջ Լուսինյան Ռոբերտ թագավորին կողմն, և ինքզինք պիտի հռչակեր «մեծ վարպետը» նույն կարգին¹:

Նարայեյի անունը վաղուց ծանոթ էր Ռումանիո, մասնավորապես Մոլդովայի հայութեան, անոր Փարիզի Հայկազյան վարժարանի ուսուցչության տարիներեն, երբ Յաշեն ու Ֆոքշանեն պատանիներու կարևոր թիվ մը կուսաներ նույն վարժարանին մեջ, և երբ այդ առնչությամբ Մոլդովայի ազգային մարմինները հաճախակի շփման մեջ էին վարժարանի վարիչներուն հետ՝ անոնց հայ եկեղեցվո ղիրկը դառնալեն առաջ և հետո:

Նարայեյ ծանոթ էր Մոլդովայի մեջ՝ իր գրական գործունեությամբ ալ, մասնավորաբար իր քերթվածներով «Բաղմավեպի» և մանավանդ «Մասյաց Աղավնիի» մեջ, որ բաժանորդներու կարևոր թիվ մը ուներ Յաշ, Բոթոշան և այլուր:

¹ Այդ կարգին Ֆրանսերեն կանոնադրությունը, Փարիզի մեջ տպագրված 1896-ին, ունեցած ենք մեր աչքերուն տակ, ու անկե կթարգմանենք վերտառությոնն ու շահեկան հոգվածներեն մինք

Արքայական կարգ
Սրբոյն Կատարինեի Սինա-լերան
պատվո ասպետության Նորին Արքայական Բարձրության
Մոնսենյոր Գվիտոն Լուսինյանի
Արքայական իշխան Երուսաղեմի, Կիպրոսի և Հայաստանի

Կանոնադրություն
Փարիզ, 1895

էջ 9 Գլուխ Բ. Եղանակ և պայմաններ ընդունելության.

Հոդված 19.—Սինա-լերան Սրբոյն Կատարինեի կարգը կշնորհվի արժանյաց հիման վրա միայն: Կարգին մեջ ընդունվելու համար պետք է նշանակալից ծառայություններ մատուցած ըլլալ մարդկության, արվեստներուն, գրականության, գիտությանց, երկրագործության, ճարտարարվեստի, հայ ազգին կամ Լուսինյան տան, և ասկե զատ, ընկերական գործակցություն մը ցույց տված ըլլալ մեծ-վարպետին կողմն ստեղծված կամ հովանավորված բարի գործերու կամ բարեգործական հաստատությանց:

Իր կարգին՝ իր բարձրաշուք տիկինը, Մարի իշխանուհին, որ ինքզինք կկոչեր «Մարի դը Լուսինյան, արքայական իշխանուհի Կիպրոսի, Երուսաղեմի և Հայաստանի», «մեծ վարպետուհին» պիտի դառնար «Մեկուզինի արքայական կարգին», պատվանշաններ շնորհելով ինքն ալ իր հերթին:

Հիշեցնենք, որ Լուսինյան իշխանական ամուլին շնորհած ասպետակսն տիտղոսներուն բաղձացող ունայնամիտներ գտնված են Ռումանիո մեջ ալ:

Ասոնցմե Լրեբը ծանոթ են մեզի:

Առաջինը Բերնարտ Ֆլիտման անուն հրեա մըն է, որ Ֆոքշանի հրեական համայնքին նախագահն է եղած ատենին, և որու մասին Բուքրեշի «Մոլդավական տեղեկատուն» հետևյալ տեղեկությունները կհաղորդեր.

«Բերնարտ Ֆլիտման Ասպետը»

«Գիտեի՞ք Սինա-լերան Սուրբ Կատարինեի Ասպետներու կարգին մասին: Ան հիմնված է 1063-ին «Լուսինյան իշխան» Ռոպերտի կողմն և վերակազմված 1891-ին Գվիտոն Լուսինյանե»

Անոր գրական համբավը շէր սահմանափակվել «Բազմավեպի» և «Մաս-յաց Աղավնիի» էջերուն մեջ լույս ընծայած իր քերթվածներով։ Ռումանիա ժամանելէ դեռ առաջ, իր քերթվածները հատորով ալ լույս տեսած էին երիցս, «Վարդենիքը» նախ, որ 1863-ին տպված էր Թեոդոսիա ու ավելի հետո «Քնար պանդխտինը» 1868-ին և «Սավերք հայկականքը»՝ 1874-ին, երկուքն ալ հրատարակված Պոլիս։ Քերթվածներու ուրիշ քաղ մը՝ որ «Փունջ Արարատյան» տիտղոսը պիտի կրեր, բախտ չէր ունեցեր լույս աշխարհ գալու։

Նարայեյ թատերագիր ալ էր։ Բրմե կմնան երկու թատերախաղեր, որոնցմէ առաջինը «Արշակ Բ» ողբերգութիւնն էր, Թեոդոսիա տպված, 1861-ին և երկրորդը կատակերգութիւն մը՝ «Ալաֆրանկա», 1862-ին տպված նույնպէս Թեոդոսիա։

Նարայեյ հայ գրականութեան մեջ ծանոթ է նաև իր թարգմանութիւններով, որոնց մեջ ամենեն ուշագրավներէն եղան իտալացի և ֆրանսացի երկու մեծ բանաստեղծներէ իր կատարածները։ Առաջինը Ալֆիերին էր, որուն «Սավուզ» ողբերգութիւնը լույս տեսավ «Բազմավեպի» մեջ 1855 տարվո ընթացքին, իսկ երկրորդը՝ Լամարթին, որուն «Les harmonies»-ը հայերենի վերածեց Նարայեյ և 1855-ին լույս ընծայեց Փարիզի մեջ «Դաշնակք Լամարթինյա» խորագրին ներքև։ Ավելի հետո՝ 1886—1888 տարիներուն, պիտի թարգմաներ նաև Հովհաննէս Դարդելի «Ժամանակագրութիւն Հայոց»-ը (տպագրված 1891-ին, Պետերբուրգ) Կարապետ Եղյանցի կողմէ իրեն ղրկված պատճենի մը վրայէն, որ զայն այդ միջոցին ֆրանսերէն տպագրող կոմս Ռիանի տրամադրած սրբագրական թերթերէն կբաղկանար։

Ավելցնենք, որ բացի Լամարթինի, Ալֆիերիի և Դարդելի գործերուն թարգմանութենէն, Նարայեյ թարգմանած է, կըսվի, Ռասինի «Գոթոդիան», Քորնելի «Պողիկտոսը», Վոլթերի «Ջայիրը», Առնոլդի «Մարիոսը», Շեքսպիրի «Հուլիոս Կեսարը» և Շիլլերի «Սթիվարթը», թարգմանութիւններ, որոնք, հավանական է, որ զոհ գացած ըլլան իր «Ստվերք հայկականքի» հառաջաբանին մեջ նկարագրված Պերայի հրդեհին²։

որ ինքզինք կոչեց «Արքայական իշխան Երուսաղեմի, Կիպրոսի և Հայաստանի» և «մեծ վարպետ Սինա-լեբան Սրբույն Կատարինիի ասպետական կարգին»։

Իբրև հետաքրքրութիւն, արձանագրենք այն փաստը, թե վավերական փաստաթուղթի մը համաձայն՝ զոր ունինք աչքի տակ, այս կարգին ասպետներուն մեջ եղած է նաև վիրաբույժ-ատամնարույժ Բերնարտ Ֆլիտման, որ ատենին, գրեթե քառասուն տարի նախագահն է եղած Ֆոքշանի հրեական համայնքին։

Ան ասպետի տիտղոսը ընդունած է 1891 նոյեմբեր 9-ին, նոյնի մեջ Լուսինյան վիլլային յեջ, «արժանիքներուն, առաքինութեանց և տաղանդներուն համար պարոն Բերնարտ Ֆլիտմանի, ուղեւով մասնավոր հավաստիքը տալ անոր մեր գնահատութեան և գոհունակութեան»։

Վկայականը ստորագրված է «մեծ վարպետ Գվիտոն Լուսինյանի» կողմէ, որ ինչպէս ցույց կտրվի սույն վավերաթուղթին մեջ, «իրավասութիւն ունի իր նախորդներէն շնորհելու ասպետի աստիճանը»։ Տվւթիւն թվականի կարգով երկրորդը Ռումանիո Փլոյեշտ քաղաքէն Ջաքարիա Անտինեսքու անուն ռումանացի մըն է, որ 1892 թ. դեկտեմբեր 18-ին պարգևատրված է Լուսինյան Մարի իշխանուհիին։

Երրորդը արդեն ուսմէն զորավար մըն է՝ Ա. Գործան անուն, որ ասպետութեան աստիճան ընդունած է 1899 թ. նոյեմբեր 29-ին Գվիտոն դը Լուսինյան իշխանէն։

«Լուսինյան իշխանի» վերածվել էր նաև, ինչպէս ըսինք, Ամբրոսիոսի կրտսեր եղբայրը՝ Խորեն։ Իշխանական իր այդ տիտղոսին պիտի կառչեր ան ալ, ինչպէս Բեռլինի իր պատվիրակութեան օրերուն՝ 1878-ին, նույնպէս հիմա, ատկէ տարի մը հետո, Ռումանիա այցելած ատեն։

² «Արաքս», 1895, էջ 99։

Նարայեյի անվան հմայքը նուև անկե էր, որ ան հրիմյանի հետ մեկտեղ 1878-ին մաս էր կազմեր Բեռլին գացող հայ պատվիրակության:

Ան շփման մեջ մտած էր նաև ֆրանսական դրականության քանի մը տիտաններուն հետ: Լամարթինի հետ նախ, թարգմանելու առթիվ մեծ բանաստեղծին քերթվածները 1859-ին: Պատասխանին մեջ այն նամակին, զոր նարայեյ ուղղեր էր Լամարթինի՝ արտոնություն խնդրելու համար, ֆրանսացի քերթողը գրեր էր 1859 ապրիլ 25-ին.

«Իմ հաճախակի հարաբերություններս Արևելքի հետ մեծ հարգանք ներշնչած են ինձ հայ ժողովուրդին համար, և մանավանդ կրոնքին, պարկեշտությանը և բանաստեղծությանը համար այս բնակչությանց, որոնք մեզմե ավելի մոտ են նախնական աշխարհի օրօրոցին և լույսերուն»:

Նարայեյ շփում ունեցեր էր նաև Վիկտոր Հյուգոյի հետ: Նա Ռումանիա կգտնվեր արդեն, երբ նամակ մը կստանար Վիկտոր Հյուգոյին: Ֆրանսացի մեծ բանաստեղծը կպատասխաներ հայ բանաստեղծին, որ անոր գրած էր Բեռլինի մեջ հայ ժողովրդի կրած հուսախաբության մասին: 1879 նոյեմբեր 20 թվականի արդ նամակին մեջ Հյուգո կգրեր. «Երկու բանաստեղծներ ենք մենք և երկու քահանաներ: Իայց բանաստեղծի ձեր հանգամանքը բավ է, որ ձեր ձեռքը սեղմեմ: Ձեր նամակը կհուզե զիս և ձեզ շնորհակալ եմ: Ինչ որ կհարցնեք ինձ Հայաստանի մասին՝ ինձմե ավելի լավ գիտեք զայն: Բայց երջանիկ եմ զայն ձեզ կրկնելով: Ազգերը, որոնք կնային անցյալին՝ պետք է չքանան. ազգերը, որոնց դեմքը ապագային է՝ պետք է որ ապրին: Հայաստանը պետք է ձեզ հետևի. ան կգտնվի քաղաքակրթության ճամբուն վրա:

Ծանոթ եմ ձեր իմացականության բարձրության: Ձեր ապագայի մեծությունը կշափեմ ձեր ոգվո բարձրության վրա: Հին ցեղերու արյունն ունիք և նոր ցեղերու ոգին»:

Նարայեյ շատ ալ դժվարություն չբաշեց իր «Լուսինյան իշխան»-ությունը նվիրագործելու համար ռումեն հողի վրա ալ: Ան ինքզինք պարտագրելու բոլոր ձևերը գիտեր և իր գործունեության ձեռնարկելե առաջ հարկ տեսավ այցելություն մը տալ պալատ: «Լուսինյան իշխանի» տիտղոսը, զոր կցեր էր անունին՝ յլուրացուց ունկնդրությունը: Իշխանական ամուլին համակրությունը գրավելու գործը այլևս հեշտ էր հոգևորականի մը համար, որ պատկառելի արտաքին ուներ, խոսելու արտակարգ ձիրք և անմիջապես կրնար հմայել խոսակիցը: Ու մեկը, որ բանաստեղծ ալ էր և գրած էր ֆրանսերեն քերթվածներ ևս, և որ իշխան էր ու արքեպիսկոպոս, ամենքն մեծարելի հյուրն էր աքունիքին մեջ, որու թագուհին՝ էլիզաբեթան, նույնպես անվանի էր իբրև քերթող, իբրև կարմեն— Սիլվա:

Նարայեյ այս կերպով ավելի ևս պատկառելի կդառնար գաղութին աչքին: Իր կառուցած հմայքը պիտի կրկնապատկվեր սակայն, երբ արքայական ամուլը եկավ ներկա ըլլալ իր հանդիսավոր պատարագին, զոր ան մատուցց Բուքրեշի հայ եկեղեցվո մեջ, պատիվ, որ աննախընթաց էր հայ թեմի տարեգրությանց մեջ և որ աննախընթաց ալ մնաց:

Վերջերս մեր ձեռքն անցավ, գրեթե պատահամբ, ռումաներեն գրքույկ մը, որ «Ազգություն մը ևս» խորագիրը կկրե և որ Բուքրեշի մեջ տպված է 1880 փետրվարին Նարայեյի ժամանումեն քիչ հետո:

Հեղինակը՝ որ B. X, կստորագրե՝ ներշնչված կթվի ըլլալ նույն ինքն Նարայեյն, և իր ամբողջ գրքույկը կնվիրե հայոց անցյալին, խաչակրությանց դա-

րերուն Կիլիկիո մեջ, և մանավանդ Նարայեյի իշխանական նախնիքներուն, որոնք իբրև թե Լուսինյաններն էին: Ան կըսե, թե Ռումանիո մեջ «ներկայությունը գերապատիվ Նարայեյին, հայ եկեղեցւոյ ականավոր մեկ իշխանին, որ կարկառուն դեմք մըն է ոչ միայն հայ կղերին մեջ գրաված իր բարձր դիրքով, իր խոր հմտությամբ և իր ծանոթությամբը բազմաթիւ լեզուներու, այլ նաև և մանավանդ իր Լուսինյան անունով, մարդոց մտածումը կտանի խաշակությանց հանրահայտ շրջանին, և նաև հին ավանդություններուն՝ որոնք Ալբանիո էլենաս արքային դուստրը՝ Մելուսինան նախամայրը ցույց կուտան Լուսինյանց:

Այս պարագան է, որ գրքույկին հեղինակը կմղե համառոտ ականարկ մը նետելու հայ ժողովուրդի պատմության վրա՝ հին դարերեն սկսյալ մինչև Կիլիկիո շրջանը, հասնելու համար 1344 թվականին՝ երբ Կիլիկիո գահը կբարձրանա Տյուրոսի Ամալրիկ կոմսին զավակը՝ Գվիտոն Լուսինյան, ենթադրյալ նախահայրը Նարայեյ արքեպիսկոպոսին: Թվելով Լուսինյանները, որ այդ թվականեն հետո կապ ունեցած են Կիլիկիո գահուն հետ, հեղինակը կհասնի վերջին ևեռին՝ զոր եգիպտացիները գերի բռնեցին 1374-ին և որ 18 տարի հետո Փարիզի մեջ պիտի փակեր աշքերը:

Կհետևի ամբողջ շարան մը անուններու, որոնք Լուսինյան տան շառավիղները կազմած են դարե դար, ինչպես և գերդաստաններու, որոնք մայր տունեն ճյուղավորված են, հասնելու համար նոր օրերու մեջ փայլող ճյուղերեն մեկուն՝ որմե իբրև թե սերած են իշխան Գվիտոն Լուսինյան, նախապես հ. Ամբրոսիոս Գալֆայան կոչվող Մխիթարյան վարդապետը, և անոր եղբայրը՝ հորեն Արք. Նարայեյ, որ երբեմն հորեն վարդ. Գալֆայան կկոչվեր պարզապես:

Հետագա էջերը նվիրված են Նարայեյի աշխատանքներուն հայկական դատին հետապնդման մեջ, իր դիվանագիտական պտույտներուն, իր այցելության ոռու արքունիքին և իր ստացած Ս. Մարիա պատվանշանին, Բեռլինի առաքելության, գրական իր ձիրքերուն և իր արձակ և ոտանավոր հեղինակությանց, իր երաժշտական ընդունակության և իր հորինած երգերուն և նաև Ռումանիա տված իր այցին և 1879 նոյեմբեր 18-ի իր պատարագին Բուքրեշի հայ եկեղեցւոյ մեջ, ուր ներկա ըլլալու եկած էր Ռումանիո վեհապետը:

Անցնելով Ռումանիո իր սույն առաքելության՝ գրքույկը կըսե թե քաղաքական բնույթ չունի ան, այլ պարզապես նպատակ ունի քննել այս երկրին հայ դպրոցներն ու եկեղեցիները և կիսոստանա բեղմնավոր դառնալ՝ եթե նկատի ունենանք բացառիկ անձնավորությունը, որ կոչված է այդ առաքելության, անձնավորություն, զոր իբրև թե չի ճանչնար գրքին հեղինակը և զոր ներկայացնելու համար հատված մը մեջ կբերե ֆրանսերեն թերթ մը («Սուառ», 1878, օգոստոս 4):

Գրքին վերջին էջերը կոչ մըն են Ռումանիո հայ երիտասարդության՝ «բոլորվիլ այս մեծ անձնավորության շուրջ, զոր բախտը կղրկե իրեն, թարմանալ իր հայրենասիրական զգացումներուն մեջ, և օգտվիլ առիթեն հայ եպիսկոպոսություն մը և հայկական ճեմարան մը հաստատելու համար հյուրընկալ այս հողին վրա»:

Սույն գրքույկը արդեն Նարայեյի «իշխան»-ությունը կուգար նվիրագործելու պատմական փաստերով ալ...

Նարայեյ Բուքրեշի հայ համայնքը խանդավառելի հետո պահ մը, իր հմայքը շալկած, գավառ կփութա: Իրեն կընկերանար, իրրև շքախումբ, Պետրոս Ներկարարյան անուն վարդապետը և հատուկ բարապան մը (Քաֆաս): Իրմե առաջ, սակայն, համբավը գավառ փութացած էր արդեն, ինչպես նաև կառավարության հեռագրական հրամանը գավառական իշխանությանց:

Արդարև արտաքին գործերու նախարար Վասիլե Բոյերեսքու, հավանաբար վեհապետին իսկ հրամանով, շրջաբերական մը կուղղեր Ռումանիո հայ եկեղեցիներու թաղականությանց, ծանուցանելով անոնց «դը Լուսինյան» սրբազանի մոտալուտ այցը իրենց քաղաքը և թելադրելով անոնց՝ «կարելի եղածին չափ փայլուն կերպով ընդունիլ զայն, մանավանդ որ Նորին սրբազանությունը Նորին վեհափառության բարձր համակրությունը կվայելե»:

Ժամանակակիցների կպատմեն փառահեղ ընդունելությունները՝ զորս Մուղովայի հայ համայնքները կաղմակերպած են ի պատիվ իրենց բարձրաստիճան հյուրին, սկսելով Գալացեն՝ ուր տոնական ընդունելություն մը եղած է:

«Մեր պարտքը կսեպենք, պ. նախարար, շնորհակալություն հայտնել այն գրկաբաց ընդունելության, զոր բարեհաճեցաք ընծայել մեր հովիվին և անոր ներկայացուցած դատին»:

«Վստահ ենք, որ հետագային ալ պիտի բարեհաճիք տալ ձեր ղորավոր աջակցությունը, որպեսզի ի կատար ածվի այն բարձր առաքելությունը, զոր ստանձնած է Նորին գերապատվություն դը Լուսինյան արքեպիսկոպոսը Ռումանիո մեջ»³:

Նարայեյ նույն փառաշուք ընդունելությանց արժանացավ իր այցելած մյուս քաղաքներուն մեջ ալ, ինչպես Ֆոքշան, Բաքու, Ռուման և այլն:

Նարայեյ Ռումանի մեջ թանկագին ղորավիզ մը ունեցավ հանձին Տոնիկ Սիմոնովիչի, որ մեկն էր համայնքին երեւելիներեն, համբավված ոչ միայն իր վայելած հեղինակությամբ հայոց և ռումեններուն մեջ, այլ նաև իր հայ չգացումներով: Գիտեր և կգրեր հայ լեզուն, և կշահագրգռվեր հայկական գործերով: Ինքն էր, որ 1868-ին, Թեոդորոս Սողոմոնյանի հետ մեկտեղ ի հիմանց նորոգած էր Ռումանի հայ եկեղեցին՝ վերածելով զայն գեղեցկակերտ տաճարի մը: Ռումանի մեջ ուներ փառավոր բնակարան մը՝ ուր քանիցս հյուրասիրած էր իշխանական ամուլը: Եվ վերջպես սերտ կապեր ուներ ռումեն պետական մարդոց հետ, որոնք պիտի կարենային, իր միջնորդությամբ, դյուրացնել Նարայեյի առաքելությունը: Տոնիկ Սիմոնովիչ առաջին իսկ վայրկյանեն ղորավիզ դարձավ Նարայեյի, ոչ միայն պատվասիրելով զայն իր բնակարանին մեջ, այլ և անոր առաքելության շահելով ուրիշ հայ եկեղեցիներ ալ:

Բոթոշանը ավելի ջերմ կըլլա իր ընդունելության մեջ:

1880 թ. հունվար 24-ին Նարայեյ Բոթոշանեն կգրե Գալացի թաղականության՝ շնորհակալություն հայտնելով այն ընդունելության համար, որ ցույց տրված էր իրեն Գալացի մեջ, և հետ հաղորդելով, որ Մուղովայի բոլոր թաղականությունները համաձայն են Ռումանիո մեջ առաջնորդության մը հաստատման, ինչպես նաև ռուման և հայ լիսեի մը հիմնումին Բուքրեշի մեջ, և որ այս նպատակով Ֆոքշանի մեջ հավաքում մը պիտի ունենան բոլոր թաղա-

³ Ioan C. Sirmabulic, Arhiepiscopul Khoren in România, „Ararat“, 1932, № 7, էջ 4:

կանութեանց ներկայացուցիչները: Նամակը խմբագրված է ռումաներեն և նարայի յուր գրովն է⁴:

Նարայի կհուսար, որ այս իշխանական ընդունելություններեն հետո դյուրավ պիտի հաջողվի իր առաքելության մեջ, այն է՝ վերականգնել ռումանահայ թեմը, ենթակա Պոլսո պատրիարքարանին:

Բուքրեշի հայ համայնքին երևելիները 1879 թ. նոյեմբեր 16-ին գումարովեր և հետևյալ արձանագրությունը ստորագրեցին.

«Այսօր, 16 նոյեմբեր 1879 տարվո, ստորագրյալներս, անդամներ Բուքրեշի հայ համայնքի, հավաքված մանչոց վարժարանի շենքին մեջ, խորհրդակցելով առաջարկության վրա, զոր ըրավ Լուսինյան իշխան հորեն նարայի արքեպիսկոպոսը, ի մասին առաջնորդության մը հաստատման կեդրոն ունենալով Բուքրեշը, և դպրոցի մը հիմնարկության՝ ուր ավանդվի գիմնազիական դասընթացքը ներկայիս գոյություն ունեցող նախնական չորս կարգերու կողքին, որոշեցինք հետևյալը.

Նկատելով, որ հորեն արքեպիսկոպոսի ըրած առաջարկը սկզբունքով մեկն է մեր համայնքին ամենեն օգտակար նպատակներեն, որովհետև ան կոչված է երաշխավորելու հառաջիկա սերունդներու հառաջագիմությունը՝ ինչ կվերաբերի գիմնազիային, ուր պիտի ավանդվի հայ լեզվի բարձրագույն ընթացքը ևս.

Նկատելով, որ Ռումանիո մեջ առաջնորդարանի մը հաստատման առաջարկը կապահովե լիապես պահպանումը եկեղեցական կանոններուն և մեր քահանաներու հոգևոր պարտականությանց.

Նկատի ունենալով, որ հորեն արքեպիսկոպոս այս բարձր նպատակին իրականացման համար հավաստեց, թե Բուլղարիո հայերը արդեն հանձնառու եղած են օժանդակելու գիմնազիային և առաջնորդության պահպանման.

Նկատելով, որ սրբազանը իր առաջարկությանց առթիվ մեզ հայտարարեց, թե կհուսա, որ Մոլդովայի հայերը ևս իրենց աջակցությունը կբերեն.

Կորոշենք.

Ա. Բուքրեշի հայ եկեղեցվո թաղականությունը համայնքին բոլոր անդամներուն հետ համախորհուրդ իր տարեկան բյուճեին մեջ դնելու չափը հազար (8000) լեյ, հաստատմանը համար գիմնազիայի մը, ներկայիս գոյություն ունեցող նախակրթարանի չորս դասարաններուն հետ միասին.

Բ. Նմանապես հորեն սրբազանի տրամադրության տակ կդնեն երեք հազար (3000) լեյի մասնավոր դումարը՝ համաձայն ներկա ատենագրության կցված հանգանակության ցուցակին՝ առաջնորդարանի պահպանության համար.

Դ. Եվ վերջապես՝ այս ատենագրության պարունակած տրամադրությունները, հասկանալի է, որ ի զորու պիտի ըլլան այն ատեն միայն, եթե հորեն սրբազան հանձնառու ըլլա անձամբ ընդունելու առաջնորդի պաշտոնը⁵:

Սույն ատենագրությունը ստորագրած են ոչ միայն թաղականության անդամները, այլև համայնքին կարևոր դեմքերեն ոմանք: Ստորագրությանց մեջ կկարդանք անունները Մանուկ Իվանթովուի, Մանուկ Ալթինովիչի, Միքա-

⁴ Ioan C. Sirmabulc, նշվ. աշխ.

⁵ Արխիվ Բուքրեշի թաղականության, գործ 54 (թարգմանված ռումաներեն):

յնլ Աճեմուլուի, Ժաք Շահիմի, Ստեփան Պետրոսի, Գ. Ա. Մելիքի, տեղակալ Ալեքսանդր Սիմիոնեսքուի, Գեորգ Թումանյանի և ուրիշ հայտնի ղեմքերու։ Բուրբեշի նախաձեռնության նպաստովոր արձագանք տվին բոլոր հայ համայնքները։

Ցաշն էր միայն որ բացասական դիրք ընդնեց, առաջին իսկ վայրկյանն, հանձին իր թաղականության, որուն գլուխն էր այն ատեն Գրիգոր Պըլըգլիու։ Ոչ միայն ինք ծառայավ նարայեյի փորձերուն դեմ, այլ ընդհանուր ժողովի կանչեց Ցաշի հայ համայնքը 1880 հունվար 13-ին ու 24-ին, և ապահովեց միաձայնություն մը՝ ռումանահայ առաջնորդական թեմի մը հաստատման ծրագրին դեմ։

Եվ սակայն, ի հեճուկս Ցաշի այս ընդդիմադիր կեցվածքին, մյուս համայնքները չկասեցան իրենց փորձերուն մեջ։

Առաջին անգամ 1880 թ. փետրվարին Ֆոքշան կհավաքվեին երկրին դանազան թաղականությանց պատվիրակները՝ խորհրդակցելու համար առաջնորդության վերահաստատության և Բուրբեշի մեջ երկրորդական վարժարանի մը հիմնարկության մասին։

Թե նարայեյ որքան կտենչար Ռումանիս առաջնորդը ղառնալու, այդ ցույց կուտա 1880 թ. փետ. 13 թվակիր իր մեկ գիրը, Ֆոքշանեն ուղղված Ռուման բաղաբի ժերակուտական Տոնիկ Սիմոնովիչի։

«... Երեկ Ֆոքշանի Փրեֆե Ֆլոնտորին հետ տեսնվեցա, որ մեծ սեր ունի հայոց վրա ու իմ ալ վրաս։ Ցաշի խնդրիքները իմացեր է. ինձմե խնդրեց, որ չցավիմ ու ընդունիմ առաջնորդական աթոռը։ Քույս էր Աղա Հակոբ Միսիրը. նա պատասխանեց, որ «ղժվար թե սրբաղանը կարենա ընդունիլ, վասնզի բյուճեն շինեցինք, տեսանք, որ ամիսը երկու հազար ֆրանք ծախք պետք է»։ Ան ատեն Ֆլոնտոր ըսավ, որ Քմեր կառավարությունը պետք է տա այդ ստակը. երկու հազար ֆրանքին խոսքը մի կըլլա մեր տերության համար։ Քաթուիկին և բրոթեսթանին ստակ կու տա, հայուն ինչո՞ւ պիտի չտա։ Պուրբեշի մեջ հայոց Աթոռ մը՝ Ռումանիո ալ պատիւ է, ուստի կառավարությունը պետք է այս ստակը տա։ Ես խոսք կու տամ, որ ամսույս 28-ին Բուրբեշ գամ ու <նախարար> Քոկալնիչեանուին հետը խոսիմ, որ իմ լավ բարեկամս է. ինքը թի որ ուղե՛ այս բանը կհաջողի անպատճառ։ Թե որ Ռումանի հայերը միարան են առաջնորդ ուզելու, Քոկալնիչեանու ղանոնք կսիրե և անոնց խաթերը համար ամեն բան կընեն», ըսավ։

«Այս խոսքերն որ Ֆլոնտոր ըսավ, միտքս եկավ, որ արդյոք Ձեր հրամանքը Քոկալնիչեանուին գիր մը գրե, չըլլա՞ր։ Գիտեմ որ ինքը Ձեր վրա մեծ վրասահություն և սեր ունի, ուստի կհավտամ, որ եթե իրեն գրեք, որ կփափաքիք առաջնորդական Աթոռ ունենան հայ ռումենները, պիտի սիրով Ձեր խընդիրքը ընդունի Քոկալնիչեանու, որ ինձի ըսած է Բուրբեշ եղած ատեն, թե Ձեր հրամանոցը վրա շատ համարում և սեր ունի, ու Ռումանի հայերը կսիրե իբրեւ երկրի հավատարիմները։

Ձեր իմաստության և աղգասիրության կթողում այս բանին վրա մտածել ու թե որ պատշաճ տեսնեք՝ գրել պ. մինիսթրին։ Ինձի կերեա, որ Ձեր գիրը մեծ օգուտ պիտի բերե աղգին, ու Քոկալնիչեանու պիտի իմանա, որ Ցաշի խնդրիքները թշնամության և ազահության համար եղած են»։

Համայնքներու պատվիրակները երկրորդ հավաքում մը կունենան մարտի 14-ին, այս անգամ Ռումանի մեջ։ Պատվիրակներ կմասնակցին Ֆոքշանեն,

Բուքրեշեն, Ռոմանեն, Գալացեն, Բաքրուեն և Թըրկո-Օքնայեն: Բոթոշան պատվիրակ չի ղրկեր, բայց գրավոր կերպով իր համամտությունը կհայտնե օրակարգի մեջ տրված հարցերուն: Իսկ Յաշը բոլորովին հեռու կմնա:

Խորհրդակցական ալս ժողովին մասնակցած են Ֆ. Ս. Ֆերհաթ և Դ. Փօփօլիշ Ֆորշանեն, Սըրմա՝ Բուքրեշեն, Ի. Չերքեզ և Գ. Թաթար՝ Ռոմանեն, Հ. Բ. Նավասարդ և Կարապետ Փօփօլիշ՝ Գալացեն, Ի. Մարքովիշ՝ Բաքրուեն, Մարքու Միհայ և Մ. Փեթրիքա՝ Թըրկո-Օքնայեն:

Իրենց սույն հավաքման մեջ համայնքներու ներկայացուցիչները կքվեարկեն բանաձև մը, որուն համաձայն հավանություն կհայտնեն առաջնորդության հաստատման՝ պայմանով, որ անոր գլուխը խորհն նարայեյը ըլլա, և այս առթիվ կքվեարկեն տարեկան 12 հազար լեյի բյուճե մը իբր առաջնորդի ռոճիկ:

Նարայեյ այցելած է նաև Սուշավա: Սուշավան ավստրիական տիրապետության տակ անցնելե ետքն ալ, հողեպես կապված մնաց Մոլդովայի հայ համայնքներուն: Նախ ազգականական կապերը, որոնք զայն կմիացնեին Մոլդովայի ալ գերդաստաններուն, մշտական հաղորդակցության մեջ կպահեին Սուշավան այդ համայնքներուն հետ: Մյուս կողմն առևտրական հարաբերություններն ալ շարունակվեցան Մոլդովայի և Բուքովինային հայերուն միջև: Եւ, վերջապես, ավանդությունները, որոնց կառչած մնացին՝ սուշավացիք, և մայրենի եկեղեցին՝ որմե երբեք չբաժնվեցան անոնք, կամրացնեին անոնց հոգեկան կապը:

Եւ հասկանալի էր հետևաբար, որ բոլոր այն հոգևորականները, որոնք հովվելու կուղային Մոլդովայի հայ համայնքները՝ անվրեպ այցելեին նաև Սուշավա:

Նարայեյի Սուշավա այցելության նպատակներեն մեկն ալ Ռոմանիո մեջ իր հիմնել ծրագրած թեմին իրավասությունները Սուշավայի վրա ևս տարածել եղած ըլլալ կթվի, ինչպես կերևա արխիվային նյութերեն, զորս ունինք ձեռքի տակ: Այդ նյութերեն կերևա նույնպես, որ Սուշավայի հայ համայնքին իրավասությունեն վեր էր լուծում տալ նման ցանկության մը, Վիեննայի ավստրիական իշխանությանց վերապահված ըլլալով նման իրավունք մը:

Զույգ գրություններ, որ պահված են Բուքրեշի պետական արխիվներու Սուշավայի հայկական ֆոնդին մեջ, որոշ լուսաբանություն կուտան այդ մասին: Առաջինը նույն ինքն իր՝ Նարայեյի գիրն է Սուշավայի հոգաբարձության ուղղված:

Երկրորդը Գաբրիել ֆոն Բրունբուլի պատասխանն է, ուր կգրե, թե Սուշավայի հայ համայնքը ստիպված է շարժիլ ավստրիական կառավարության հրահանգներուն համաձայն: Բսկ ինչ կվերաբերի Սուշավայի նյութական օժանդակության առաջնորդարանի մը ծախքերուն, ինչպես բերանացի ալ հաղորդված էր իրեն՝ Նարայեյ սրբազանին՝ անոր Սուշավա գտնված ատեն, նման օգնություն մը անհնար է եկեղեցվո սնտուկեն, այլ հասարակության նվերներով:

Այս օգնությունը ևս ջուրը պիտի իյնար ինքնին՝ առաջնորդարանի մը ստեղծման ծրագրին վիժելուն հետ մեկտեղ:

Փորձեր եղած են Սուշավայի հայությունը ևս շահագրգռել բարձրագույն այն հայ կրթարանով, զոր Նարայեյ Մոլդովայի հայ համայնքներուն առաջարկած էր բանալ և որուն ստեղծման ի նպաստ արտահայտվեր էր այդ հա-

մայնքներուն մեծամասնությունը Ռոման քաղաքին մեջ իրենց գումարած պատգամավորական ժողովի ընթացքին:

Պատգամավորական սույն ժողովին նախագահող Հ. Չերքեզյանի Սուչաւա ուղղած հետեւյալ գրութիւնը գտանք 1880 թ. մարտ 25 թվականով.

«Պատիւ ունիմ գրովս միատեղ հաղորդել Ձեզ Ռումանիո հայոց ամեն քաղաքներեն (բացի Պոթոշանե և Յաշու) պատգամավորաց ժողովույն վճիռը՝ որ ամսույս 14-ին նստույն մեջ որոշվեցաւ Ռոման քաղաքի մեջ: Մեզ կթվի, որ այս գործը շատ շահավետ պիտի ըլլա հայ ազգին, թե եկեղեցական կարգավորութեան համար, և ազգին լուսավորութեան համար՝ որ շատ կարոտելի է. վասնզի հայ ազգը շատ ետ մնացած է զիտութեան մեջ. և առավել հայասիրութեան զարգացման մեջ, որ գրեթե մեծ մասը մեր տղա հայոցմե ամոթ կհամարին հայ անվանիլ կամ հայերեն խոսիլ: Խնդրեմ, որ այս որոշումը տեղւոյդ ամեն ազգայնոց բարի կամենաք հաղորդելու, և հույս ունիմ, որ այս գործիս հարկավորութիւնը և որքան օգտակար է ազգիս Ձեր քաղաքացւոց բացատրելով: Յուրյանց կողմանե ալ նյութական օգնութիւնը պիտի մատակարարեք.

Ընդունեցեք, և այլն

Նախագահ՝ պատգամավորաց ժողովույն

Հ. Չերքեզյան»:

Գարրիել Ֆոն Բրունքուլ, Սուչաւայի հայ համայնքին հոգաբարձութեան նախագահը, 1880 թ. մարտ 30-ին (11 ապրիլ) կպատասխանե, թե Նարայեյ արքեպիսկոպոսի Սուչաւա գտնված օրերուն ևս խոսք անցած է այդ մասին և որոշված է, որ նախ ստացվի ավստրիական կառավարութեան հաճութիւնը: Կալէլցնե հետո թե հոգաբարձութիւնը հրաժարած է, բայց իր հաջորդը պաշտոնի անցած չէ դեռ, և վասնզի տեղւոյս սահմանադրութեան կյորե բստ կարգի տնրութեան, պետք է նախ 3 կամ 4 ամիսի չափ լրագրո մեջ հրատարակվի նոր ընտրութեան համար և ապա կառնա հաստատվիլ», այնպես որ այդ վաւերացումեն ետքն է, որ նոր հոգաբարձութիւնը պիտի տա պատշաճ պատասխանը:

Այլեւորդ է ըսել, որ առաջնորդական հարցին նման՝ վիժած է Բուքրեշի մեջ երկրորդական վարժարանի մը ստեղծման ծրագիրը ևս, որով ինքնին կարիք չէ մնացած, որպեսզի Սուչաւայի համայնքը ևս բերե իր նյութական աջակցութիւնը:

Նարայեյ հաղիւ մեկնած էր Սուչաւայեն և Մոլդովա անցած՝ ահա բացառիկ հուզման մը կմատնելի Սուչաւայի հայ համայնքը, այնտեղ արձագանք գտած ըլլալով Բուքրեշի ռումաներեն մեկ թերթին Պոլսո «Սթամբուլ» լրագրեն քաղած հատվածը, որ կասկածի տակ կձգեր Նարայեյի իշխանական ծագումը, լուսինյան տիտղոսը, զոր ան կկցեր իր անվան և նույն իսկ անոր արքեպիսկոպոսութիւնը: Սուչաւայի հայ համայնքը ցնծութեան պահէր դեռ նոր ասրեր էր բարձրաստիճան հայ հոգեւորական մը ողջունելուն համար իր մեջ, և օտարներուն առջև պարծենցեր ալ էր: Թերթերու մեջ տպված այդ տեղեկութիւնը շշմեցուցեր էր հիմա վայն մեկնե, և կստիպվեր Պոլսո պատրիարքին դիմել իսկույն լուսարանութիւն խնդրելու համար:

Սուչաւացիներու աչքին կշարունակեր «Իշխան Լուսինյան» մնալ այսպես Նարայեյ...

Հիշեցինք, իր տեղին, թանկագին աջակցությունը, զոր Նարայեյ գտած էր Մոլդովայի կարկառուն հայ դեմքերեն մեկեն, որ Տոնիկ Սիմոնովիչն էր։ Նարայեյ Մոլդովայեն չբաժանված՝ անդամ մը ևս պիտի հիշեր այդ աջակցությունը, և չբավականանալով անոր մասին իր ըրած բարեխոսություններով պետական տնտեսականության մոտ, պիտի ուզեր ազգային տիտղոսով մըն ալ պատվել զայն՝ տիտղոս, որ չկար, սակայն, հայ եկեղեցական ավանգուստյանց մեջ։ «Եպիսկոպոսական փոխանորդ» կանվաներ զայն, միևնույն ատեն իրավունք կուտար անոր, հանուն իրեն կարգադրելու պսակ մը՝ զոր հայ եկեղեցվո Օրենքները թույլ չէին տար կատարել, և զոր սակայն իբրև բացառություն Նարայեյ արտոնած էր։

Նարայեյ Պոլիս վերադարձեն հետո ալ չէ լքած Ռումանիո առաջնորդ դառնալու իր ծրագիրը։ Հիշյալ Տոնիկ Սիմոնովիչի թուղթերուն մեջեն գտանք Նարայեյի կողմե 1881 թ. փետր. 27-ին անոր գրված նամակ մը, ուր կըսե.

«Սրբազան պատրիարքը ինձի ըսավ, որ Աղա Ջերբեզը իրեն մեկ նամակ գրեր է հարցնելով, թե կընդունի՞, որ Ռումանիո հայերը իրենց առաջնորդ խնդրեն զԽորեն արքեպիսկոպոս։ Պատրիարքը պատասխաներ է, թե սիրով կընդունի։ Բայց կըսե, թե Ջերբեզ մեյ մըն ալ գիր չէ գրեր իրեն։ Ես կզարմանամ այս բանին վրա, թե ինչու Աղա Ջերբեզ մինչև հիմա չղրկեց ի պատրիարքարան Ռումանի մեջ ժողոված տեղեկաթներու ժողովքին բողոքս-վերալալը։ Կխնդրեմ, որ այս մասին իրեն գրեք»։

Այդ օրերուն էր, որ ռումեն ծերակույտի անդամ ընտրվեր էր պատվական այդ հայը, որ Տոնիկ Սիմոնովիչն էր։

Խորեն Նարայեյ հիշյալ նամակին մեջ կգրե այդ առթիվ Տոնիկ Սիմոնյանի.

«Պուրբեշեն Ջեր գրած նամակն ընդունելով մեծ ուրախություն ունեցա, իմանալով սենաթի անդամ ընտրվելնիդ տոմնու Քոկլինիչյանին տեղ։ Այս առաջին անգամն է, որ հայ մը քսանուերկու տարիե ի վեր սենաթին մեջ կմտնե, և ուրախ եմ ավելի անոր համար, որ արժանավոր հայ մըն է, որ ճամբա կբանա։

Դուք ձեր ազգասիրությամբը և եկեղեցասիրությամբը անվանի եղած եք և ազգին անունը բարձրացուցած եք ռումեններու առջև։ Ձեզմե ավելի արժանավոր մեկը չէր կրնար սենաթի մեջ հայ անունը բարձրացնել ձեզի շափ։ Ուստի կխնդրեմ յաստուծո բարձրելո, որ ձեր թանկագին կյանքն երկարցնե, որպեսզի սենաթին մեջ ալ հայ ազգին շահերը պաշտպանեք և փառավորեք հայությունը, ինչպես որ փառավորեր եք մինչև հիմա ձեր այնքան ազգասիրական գործերովը։

Ես փափաքելով, որ Տաճկաստանի հայերն ալ, Ռուսաստանի հայերն ալ ճանչնան զձեզ և ուրախ ըլլան, «Մասիս» լրագրին մեջ (թիվ 2826) գրել տվի ձեր անունը և սենաթի անդամ ընտրվելնիդ»⁶։

Նարայեյ կշարունակե.

«Իմ ցավս մեծ է, քանի որ կմտածեմ, որ Ռումանիո հայ երիտասարդությունը չսովորելով իր ազգային լեզուն, պիտի գա օր մը, որ ազգություննին ալ կամաց, կամաց մոռնան ու կորսնցնեն։ Այս մասին ամեն քաղաքի մեջ խո-

⁶ Արդարև «Մասիս» 1881 փետրվար 23 (մարտի 7-ի) թիվին մեջ կգտնենք Նարայեյի գրչեն ելած դրվատալից այդ հոդվածը «Վսեմաշուք տիար Տոնիկ Սիմոնյանի» մասին։ Նույն այդ հոդվածեն կիմանանք, թե «սույն ազգասեր, եկեղեցասեր և անվանի հայուն վրա լիովին ծանոթություններ տվավ Խորեն արքեպիսկոպոս Լուսինյան Օրթադյուղի լսարանին մեջ առաջի խուռն բազմության ունկնդրաց. Ռումանիո հայոց վիճակը նկարագրած ժամանակ»։

սեցա, աղայեցի ու հորդորեցի, որպեսզի Պուրբեշի մեջ բարձրագույն դպրոց մը բանան, ուր աշակերտները ամեն ուսումներու ու պետք եղած լեզուներու հետ սորվին ազգային լեզու ու պատմություն: Հոն աղքատի տղայք կրթվին, որպեսզի ըլլան վերջը վարժապետ ու քահանա Ռումանիո քաղաքներուն մեջ: Զեր սիրելությունը լավ հասկացած է այս բանին հարկավորությունը, ուստի և կխնդրեմ, որ ի սեր Աստուծո այս աշխատությունը հանձն առնուք, և հորդորեք Պուրբեշի և ուրիշ քաղաքի հարուստները, որ իրենց խոստումը կատարեն: Իմ հույսս Զեր վրան է, վասնզի լավ կճանաչեմ ձեր ազգասեր սիրտը և հայրենասիրական մտածությունները»:

Նարայեյ ի դուր կբաղձար սակայն կրկին Ռումանիա դառնալ, շարունակելու համար իր կես ձգած առաքելությունը:

Եվ սակայն ձախողած էր արդեն այս առաքելությունը:

Յաշի կողմե ցույց տրված ընդդիմությունը՝ ժառանգ մնացած էր նախորդ սերունդեն, որ 1840-ի կանոնադրությունը պատրաստել էր աղղային և մշակութային դարթնքի շրջան մը ստեղծելու համար Մոլդովայի հայ համայնքներու ժոցին մեջ, բայց միևնույն ատեն անհնար դարձնելու համար իսպառ հայ թեմի մը հիմնարկությունը իրենց շրջանին մեջ: Ու քառասուն տարիե ի վեր իրարու հաջորդող թաղականությունները խափաներ էին առաջնորդություն հաստատելու ամեն փորձ, ուրիշ հոգևորական շթույլատրելով Մոլդովայի մեջ, բայց միայն անոնք, որ իբր այցելու կուգային:

Համառելով հավատարիմ մնալ այս սկզբունքին՝ Յաշի հայ վարիչները ոչ միայն երկյուղ կկրեին առաջնորդության մը հաստատման հետևանքով հառաջ գալիք անպատեհություններեն, այլ նաև և մանավանդ խուսափիլ կուղեին այդ առթիվ ստեղծվելիք ծախսերեն:

Կերևա թե Նարայեյի ձախողության մեջ դեր ունեցած է նաև ոչ նպաստավոր վերաբերումը ղինքը Փարիզեն կամ Թեոդոսիայեն ճանչցողներուն:

Արդարև, Նարայեյի շար բախտեն Յաշի հայ համայնքին մեջ գերակշիռ էր այդ պահուն ձայնը բացառիկ ղեմքի մը, համբավավոր իրավաբան Գրիգոր Պիյիբլիուի, որ Նարայեյը կճանչնար Փարիզի անոր տարիներեն, երբ ինք կաշակերտեր «երից վարդապետաց» վարած դպրոցին, իր մյուս լղբայրներուն հետ:

Երբ մեկ քանի տասնյակ տարիներ առաջ կուսումնասիրեինք Միհայիլ Քոզլընիշիանուի անվան ինստիտուտի արխիվային նյութերուն մեջ հայերեն վավերագրերը, հանդիպած ենք ուսմանահայ հին ծանոթ ղեմքերեն Դավիթ Պալասանի նամակներուն, ուղղված ուրիշ ծանոթ ղեմքի մը՝ Հովհաննես Յարանուի, նամակներ, որոնք գրված են Թեոդոսիայեն, երբ հոն կուսաներ Պալասան, իսկիսյան վարժարանի մեջ Նարայեյի ուսուցչության օրերուն և որոնց մեջ այնքան ալ բարյացակամ չեն իր արտահայտությունները Նարայեյի մասին: Դավիթ Պալասան նույնպես դիրք ուներ Մոլդովայի մեջ՝ Նարայեյի հոն շրջադաշտ տարին: